ՊԱՐՈՒՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ «ՈՍԿԵՓՈՐԻԿ»-Ը ԵՎ ՆՐԱ ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Հայաստան կատարած իր անդրանիկ այցելության տարիներին երիտասարդ Նիկողայոս Մառը հնարավորություն ունեցավ ծանոթանալու Էջմիածնի մատենադարանի ձեռագրական հավաքածուներին և 1891-ին հրատարակելու նրանցից կատարած իր քաղումներն ու դիտարկումները: Դրանք փաստորեն մինչև այսօր էլ իրենց ձեռագրագիտական-աղբյուրագիտական արժեքը պահած ինքնակա հոդվածներ են, թվով 15 միավոր[1]: Նրանցից 6-րդ համարակալումն ունեցող դրվագը Գրիգոր Տաթևացու «Ոսկեփորիկ» աստվածաբանական ժողովածուն բովանդակող ձեռագրերի (Էջմ. N 1632, 1633, 1634 = Երևանի Մատ. N 1454, 1455, 1476) նյութի ներկայացումն է և «Ոսկեփորիկ» անվանումի արծարծումը:

Կարծում ենք, սխալված չպիտի լինենք, եթե ենթադրենք, թե Արևելք եկած պապական քարոզիչների դեմ պայքարելիս Տաթևացին ծանոթացած պիտի լինի նրանց հրատարակությունների երբեմն խոսուն անվանումներին և «Ոսկեփորիկ» խորագրով յուրովսան փոխադարձած դրանց: Եվ հիրավի՝ նման մի խորագիր ունի Հանվենսիայի եպիսկոպոս Հակոբ Վոռուճինոյի ճառերի ժողովածուն՝ «Բանք ոսկիականք», որը 1739 թ. Ղուկասի կողմից (Հարությունն վարդապետի պատվերով) թարգմանվել է հայերենի[2]:

«Ոսկեփորիկ» ժողովածուն ընթերցողին հայտնի էր 1746 թ. Պոլսո հնատիպ հրատարակությամբ, որի համար հանձնարարական առաջաբան է գրել Պատրիարք Հակոբ Նալյանը[3]: Ն. Մառի անդրադարձումից երկու տարի անց «Ոսկեփորիկ»-ի կազմության հանգամանքների հիշատակությունն ենք գտնում Ղ. Ալիշանի մոտ. «Վերջին գրաւոր գործոց իւրոց և մի ի գլխաւորացն համարելի է զՈսկեփորիկն, յերուրեալ յամի 1410, որ է «Հարցումն խօճայ Մասուդշայի և պատասխանիք Գրիգորի» զհաւատոյ խնդրոց. զհարցողն կոչէ իւր անդրանիկ ըստ հոգւոյ եղբայր»[4]: Ինչպես երևում է, Ղ. Ալիշանի ձեռքի տակ եղած ընդօրինակության հիշատակարանը մասամբ տարբերվել է Ղ. Փիրղալեմյանի, Հ. Տաշյանի և Լ. Խաչիկյանի հրապարակած հիշատակարանների բնագրերից, քանի որ «Ոսկեփորիկ»-ը[5]

---

[1] **H. Марр,** Из летней поездки в Армению. Замеcтки и извлечения из армянских рукописей. – "Записки Восточн. отд. Имп. русск. археолог. общества" (ЗВО), т. V (1891), стр. 211-241, т. VI (1891), стр. 135-228.

[2] Մատ. ձեռ. N 404 (Ա), 306:

[3] **Ն. Ա. Ոսկանյան, Ք. Ա. Կորկոտյան, Ա. Մ. Այվազյան,** Հայ գիրքը 1512-1800 թվականներին, Երևան, 1988, էջ 383-384: «Ոսկեփորիկ»-ը 1995 թ. Երևանում լույս տեսավ Հակոբ Քյոսեյանի աշխարհաբար թարգմանությամբ ու ծանոթագրություններով:

[4] **Ղ. Ղևոնդ Ալիշան,** Սիսական. փղեագրութիւն Սիւնեաց աշխարհին, Վենետիկ, 1893, էջ 240-241: 1410 թվականը թերևս տպագրական վրիպակ է՝ 1401-ի փոխարեն:

[5] Նշտարք Հայոց, հատաբեալ և ի լոյս ածեալ ձեռամբ Ղևոնդ վարդապետի Փիրղալեմեան Տոսրեցւոյ, Կ. Պոլիս, [1888], էջ 27: Ընդօրինակումը կատարված է Տարոնի Սուրբ Առաքելոց վանքի ձեռագրից:

գրված է համարում (յերուրեալ) 1410 թ., մինչդեռ վերջիններիս մոտ ՊԾ (1401) և ՊԾԶ (1407) է: Այս թվականներից նախընտրելին 1401 թ. է, քանի որ այդ է վկայում նաև N 5118 ձեռագիրը, գրված 1412 թ. նշանավոր Ավագ վանքում (հիշատակարաններ տե՛ս 196v – 197r, 287r էջերում): Պատկերի լիարժեքության համար ստորև բերում ենք աղբյուրը իր բոլոր տարբերակումներով (ներառյալ Վիեննայի օրինակի Հ. Հ. Տաշյանի ընթերցումը)[6]:

Ձեռ. N 1476, 147v - 148r, N 5118, 196v
Յիշատակարան[7]

Եւ ես՝ տարտամս յուսումնասիրաց Գրիգոր պիտականուն խնդրող բանի, հաւաքեցի զգիրս[1] աստուածաբանութեան որ անուանեալ կոչի Ոսկեփորիկ, զի[2] և[3] ըստ իրին և զանուն[4] առեղեալ[5] ունի ոսկի՝ այսինքն անապական և պատուական[6] գանձիւք աստուածային առլցեալ, որ և զստացող իւր և զսիրողս աստուածաբանութեամբն փարթամացուցանէ[2]:

Արդ, գրեցաւ սա ընդ հովանեաւ Սուրբ Առաքելոյս՝ առաքելական աթոռոյս Եւստաթէի և այլ բազմահաւաք սրբոյթեանց, ի ձեռ և ի նուազեալ ժամանակի[7] թուականութեան մերոյ[8] ազգի ՊԾ[9] - երորդ ի խնդրոյ ումեմն բարեպաշտի խոճայ[10] Մասուտշահի[11], բնակութեամբ ի սեպուհ արանց Դաւրէժ քաղաքի[12], զոր խնդրեաց բազում անգամ գրով և բանիւ գրել յաղագս Սրբոյ Երրորդութեանն[13] եւ յաղագս Քրիստոսի աստուածութեանն[14]:

Եւ ես տկար հոգով[15] և ծիրեալ[16] մարմնով[17] հաւաքեցի[18] ի սրբոց արանց[19] զճշմարիտն և զուղիղն և գրեցի[20] կարճառօտ բանիւ[21] և ի Դ. հատորս բաժանեցի վասն դիւրութեան ընթերցողաց, և յաւելեալ[22] բանս[23] ի մերոց վարդապետաց իբր թագաւորական կնիք, և մեկնութիւն ի վերայ եդեալ[24]:

Եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք, պատիւ և իշխանութիւն յաւիտէանս յաւիտենից, ամէն[25]:

1 Գիրքս Տ 2 զի և ըստ իրին... փարթամացուցանէ] Փ 3 և] ՏԽ 4 զանունն Տ 5 ունի... փարթամացուցանէ] Տ 6 և պատուական] ՓՏ 7 ժամանակիս Տ 8 մերում Տ 9 ՊԾԶ ՓՏ 10 խաւջայ Տ 11 Մասուդշահի Փ 12 Դաւրէժ քաղաքի] Տ 13 Երրորդութեան Փ, Սրբոյ Երրորդութեանն] Տ 14 աստուածութեան 15 տկար ոգով ՓԽ 16 ծիրեալս Փ 17 +գրեցի և Տ 18 ի] ՓԽ, Փ 19 արանց] Փ 20 և գրեցի] ՓՏ 21 բանիւք 22 և յաւելեալ... ամէն] յիշեցեք ի Քրիստոս զվերոյ ասացեալն բարեպաշտ զխոջայ Մասուտշահն հանդերձ ծնողօք իւրովք՝ զհայր նորա զՑակոբշահն և զմայրն Էլխութլուն: 23 բանս] ՓՏ 24+ Արդ աղաչեմ զձեզ սիրովն Քրիստոսի, որք աւգտիք ի սմանէ յիշեցէք ի Քրիստոս զվերոասացեալ բարեպաշտ խաւջա Մասուդշահն հանդերձ ծնաւղաւք իւրովք, զհայրն նորա զՑակոբշահ և զմայր նորա Էլխութլու և զաւագ եղբայրն նորա զընթերցող եկեղեցւոյ զՑուսուֆշահ: Այլև աղաչեմ

---

[6] Հ. Յակոբոս վ. Տաշեան, Ցուցակ ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 400-402: Հմմտ. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա (1401-1450 թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 9-10:

[7] Համեմատության առնվող հրատարակությունները ներկայացվում են հրատարակողների ազգանվան սկզբնատառերով՝ ժամանակագրական հաջորդականությամբ: Լ.Խաչիկյանը այն քաղել է Մատ. N 5118 ձեռագրից, իսկ Վ. Հակոբյանը տպագրի վրա իր ձեռքով ավելացրել է «տե՛ս նաև N 5586, էջ 291ա-բ»:

որ ընդաւրինակէք գրեսջիք զսակաւ յիշատակս մերոյ մաղթանաց Տ, 25 եւ Քրիստոսի... ամէն] Խ:

Անկախ Հ. Հակոբոս Տաշյանի նկարագրության մեջ կատարված որոշ կրճատումներից, այնուամենայնիվ համեմատաբար ընդարձակը դարձյալ նրա ներկայացրած ձեռագրի (ԺԶ դար) տարբերակն է, ուր կոչված են պատվիրատու *Մասուդշահի* թե՛ ծնողները՝ *Հակոբշահ* և *Էլ–խութլու*, թե՛ եղբայրը՝ *Ցուսուփշահ*: Հիշատակարանում եղած «բարեպաշտ» բնութագրումը թույլ է տալիս եզրակացնել, թե իսլամական անուն կրող *սեպուհ Մասուդշահը*, այնուամենայնիվ, օտարազգի և այլադավան չէ, մանավանդ որ պատվիրատուի ավագ եղբայր Ցուսուփշահը «ընթերցող եկեղեցւոյ» է, այսինքն՝ գրակարդաց, սաղմոսասաց, տիրացու: Թերևս անունների այս իսլամական հնչման պատճառով է, որ «Ոսկեփորիկ»-ի հեղինակային հիշատակարանն ընդօրինակողները երբեմն անպատշաճ են նկատել քրիստոնեական աստվածաբանության նվիրված ժողովածուի պատվիրատուին հասցեագրված խոսքի մեջ նրանց հիշատակել: Կրճատումը շրջանցել է Մասուդշահին (տպագրում այն «խմբագրված» է «Մաշդուս»), որովհետև «Ոսկեփորիկ»-ի առաջին իսկ էջի խորագրում ասված է «Հարցմունք Մասուդշահի իշխանի բարեպաշտի և պատասխանիք Գրիգորի եռամեծի՝ աշակերտի տեառն Յոհաննու Որոտնեցւոյ տիեզերալոյս վարդապետի նախ յաղագս Սրբոյ Երրորդութեան և ապա յաղագս Բանին մարդեղութեան ի Սուրբ Գրոց և յուղղափառ վարդապետաց հաւաքեալ» (ձեռ. 1476, է 13r) «Ոսկեփորիկ»-ի հեղինակի և պատվիրատուի փոխադարձության վերաբերող որոշ տեղեկություններ կարելի է քաղել Գրիգոր Տաթևացու ուղերձից, որ պահպանել են[8] առանձին ձեռագրեր (Ձեռ. N 1476, 146v , ձեռ N 1454 էջ 258- 253r)

«Արդ զայս սակաւուք զաստուածաբանութիւնս, որ հաւաքեցի ի Սուրբ Գրոց՝ յանսկզբնական բանէն սկսեալ, ի հաւատս և ի գործս աւարտեալ, ընծայեցի քեզ զանձդ հոգևոր և յիշատակ բարեաց ի Քրիստոս, որդի լուսոյ և ծնունդ վերնոցն Սիովնի, հաւատարիմ ծառայ Աստուծոյ Մասուտշահ: Եւ երիս ինչ խնդրէ ի քէն հատուցումն փոխարինաց քանքարս տուեալ շահեցողաց. նախ՝ միշտ աշխատասէր մտաւք առանց ձանձրանալոյ ընթերցցիս զգիրս զայս յարաժամ և զդժուա[ր]լուր բանս հայցեսցես ի մտաւորաց և զդիւրինս ի մտի պահեսցես, և զայլս ուսուցես: Եւ երկրորդ՝ զի հաւատս հաստատուն և անխափան կացցես մինչև ի կէտ կոչմանն քո: Երրորդ խնդիր՝ զի ի բազում սուտապատիր բանից և աղանդոց հերձուածողաց ի բաց հեռասցիս, զի յետին ժամանակի և կարապետք նեռինն բազմացեալ, խաբէութիւն և սուտն յառաջեալ, արդարութիւն և ճշմարտութիւն յետնեալ և ամենևին նուազեալ ի մարդկանէ՝ ըստ սաղմոսերգութեանն Դաւթի: Եւ տէրն համաձայնի՝ ասելով. Որդի մարդոյ եկեալ գտանիցէ արդեւօք հաւատս յերկրի: [Հմմտ. Սաղ. Ը, 3: Ղուկ. ԺԸ 8]

Վասն որոյ, որդեակ լուսոյ և ուղղութեան, փախիր ի նեստորաց՝ որպէս ի կատաղի շանց, զի յայտնի ուրացողք են աստուածութեանն Քրիստոսի և համաձայն այլազգեաց Հրէից խաչողաց, մանաւանդ մարդադաւան և կռապարիշտ, որք զսոսկ մարդոյ միս և յա-

---

[8] Ուղերձի գոյությունը արձանագրված է Լ. Խաչիկյանի կազմած ԺԵ դարի հիշատակարանների Ա հատորի ծանոթագրության մեջ, էջ 10, ծան. 1:

րիւն ճաշակեն ի կորուստ ինքեանց և ոչ զճշմարիտ մարմին և արիւն որդոյն Աստուծոյ: Փախիր և երկաբնակաց Քաղկեդոնի ժողովոց՝ որպէս ի թիւնաւոր վիշապաց, որք զմի տէրն ուրացեալ են՝ երկճղի լեզուաւ համախոհ (147r) Նեստորի զինքեանս ուղ[ղ]ափառ համբաւեն՝ ուղիղ ի լեզի և թիւր՝ ի սրտի, յայտնի խոստո/վանող և ծածուկ ուրացող: Ծրթամբք պաշտեն զՏէր և սրտիւք մեկուսացեալ որոշին ի Տեառնէ, որոց դատաստանն յաւիտենական պահի՝ ասէ առաքեալ [հմմտ. Սաղ. ԺԱ, 3]:

Այլ դու, որդեակ, ընտրեալդ յորովայնէ և սիրեցեալդ ի Տեառնէ, մի խաբեսցեն զքեզ արք ամբարիշտք, որոց Աստուած յորովայն իւրեանց է [Փիլիպ. Գ, 19] և փառք՝ յամօթն: Զհաւատ քրիստոնէից ընթեռնուն և զգործս այլազգեաց սիրեն: Մի՛ ընթանար զհետ խաբեբայ կախարդաց նոցա, զի ոտք նոցա ի չարիս ընթանան [Եսայ. ԾԹ, 7],- ասէ իմաստուն առակօղն [Առակ, Ա, 16]:

Այլ դու զոր լուարն և ուսար ի հարցն ուղղութեան՝ ի նոյն հաստատուն և անշարժ լեր ի միտս, ի բանս, ի գործս, և մի՛ շիջցի ճրագ մտաց քոց և մի՛ նուազեսցի իւղ լապտերի քո, և մի՛ ծածկեսցես երբէք զլոյս հաւատոցդ ընդ գրուանաւ հեշտութեան կամ երկեղի: Այլ բոլոր սրտիւ և բոլոր հաւատով և լեզուաւ հաւատա ի Հայր և յՈրդի և ի Հոգին Սուրբ ծնաւղ, ծնունդ և բղխումն ոչ յետոյ կամ ի ժամանակի, այլ միշտ յաւիտեանց՝ երեք անձինք և մի բնութիւն, մի տէրութիւն, մի կամք, մի գործք, և ամենայն ինչ անբաժանելի, իսկ մի յերից անձնաւորութեանցն՝ Բանն Աստուած, յետոյ ի ժամանակի յԱստուածածին կուսէն մարմին առեալ և հոգի, և միտք, և միաւորեալ ընդ Իւրում աստուածութեանն անբաժանելի. Աստուած մարմնացեալ և մարդացեալ միանձն և միաւորեալ երկուց բնութեանց մի բնութիւն, մի կամք, մի գործք: Յետ Լ ամի եկեալ ի Յորդանան մկրտի ի Յովհաննէ. հայր ի վերուստ վկայեալ՝ Դա է որդի Իմ սիրելի [Մատթ. ԺԷ, 3] և ոչ թէ դոքա: Այլ զմինն միածին Բանն՝ զորդի Կուսին դաւանեաց՝ Դա է Իմ ասելով: Եւ Հոգին Սուրբ աղաւնակերպ իջեալ վկայեաց փառակցի Իւրոյ: Եւ այնպէս քառասնօրեայ պահեալ, յաղթեալ զփորձիչն, որ յաղթեց յԱդամայ. և սոյնպէս մերով բնութեամբս կատարեալ զքաղց և զծարաւ, զայ կամաւոր ի չարչարանս խաչի: Աստուած մարմնով մեռանի և Տէրն փառաց անորդի, որպէս ասէ Աստուածաբանն՝ Աստուած խաչեալ, արեգակն խաւարեալ, և դնի ի գերեզմանի անապական մարմնով: Եւ իջեալ ի դժոխս՝ լոյս ծագեաց հոգոյն արկեալ ի բանտին, կապեաց զհզորն սատանայ և ազատեաց զհոգիսն, որ յԱդամայ: Որք հաւ(147v)ատացին՝ յաւիտենից ազատեցան, և որք ոչ հաւատացին՝ ժամանակեա արձակեցան և դարձեալ ի դժոխս դառնան, որպէս ասէ Դաւիթ՝ Դարձին մեղաւորք անդրէն ի դժոխս և ամենայն հեթանոսք [Սաղ. Թ, 18]: Եւ ապա յարուցեալ յերրորդ յաւուր, յաւուրս քառասուն երևեալ առաքելոցն և հաստատեալ զՅարութիւնն Իւր: Ապա նովին մարմնովն համբարձաւ յերկինս և նստաւ ընդ աջմէ Հաւր ամենակալի, այսինքն ի փառս աստուածութեանն, և գալոց է ի կատարածի դատել զկենդանիս և զմեռեալս, այսինքն՝ զարդարս և զմեղաւորս, կամ՝ զդասս դիւաց և մարդկան կամարարաց նոցա:

Այս է ճրագ և լոյս ճանապարհին կենաց, այս է առաջնորդ և ուղղիչ յերկրէ յերկինս: Զայս աւանդեաց մեզ երեք սուրբ ժողովն հարցն ուղղափառաց, որք ի Նիկիայ ընդդէմ Արիոսի, որ զԲանն ստեղծուած ասաց, և որք ի Կոստանդինուպօլիս ընդդէմ Մակեդոնի, որ զՀոգին Սուրբ հայհոյէր, և որք յԵփեսոս ընդդէմ Նեստորի, որ ուրացաւ զԿոյսն Աստուա-

ծածին, այլ մարդածին, և զծնեալն ոչ Աստուած, այլ մարդ դաւանեաց:

Զայս դաւանութիւն հաւատոյս և զկանոն քրիստոնէութեանս եբեր առ մեզ բազմաչարչար հայրն սուրբ լուսաւորիչն մեր Գրիգորիոս և որդիք և թոռունքն նորա Սուրբն Ներսէս և Սուրբն Սահակ և այլք ամենայն մինչև ցայժմ, որ ունիմք յեկեղեցիս և անփոփոխ պահեցաք և պահեմք մինչև ի կէտ կոչման մերոյ և որոշումն շնչոյս:

Եւ դու, զաւակդ ուղղափառութեան, որպէս վերոյ գրեալդ ուսուցանէ փոքր ի շատէ, զսակաւ ընթերցիր և բազում ուսիր և ի նոյն հաստատուն լեր, անփոփոխելի: Զի ամենայն ճշմարիտ դաւանողքն զՔրիստոս Աստուած խոստովանեցան և ի նոյն նահատակեցան և առ ճշմարտութիւնն Քրիստոս յերկրէ յերկինս վերափոխեցան: Եւ զմեք(!) զնոյն պինդ կալցուք՝ անշարժ յուսով ի կեանս և ի մահ և յետ մահու, և նորին խոստացեալ բարեացն արժանաւոր լիցուք ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում ընդ Հաւր միանգամայն և Հոգոյն Սրբոյ փառք, պատիւ և իշխանութիւն յամենայն գոյից անբաւ յաւիտենից: Ամէն»:

Եթե այս երկու աղբյուրներից քաղած տեղեկությունները մեկտեղենք՝ կարող ենք ամփոփել, որ բարեպաշտ Մասուդշահը «բնակութեամբ ի սեպուհ արանց Դաւրէժ քաղաքի է», «որդի լուսոյ և ծնունդ վերնոցն Սիովնի, հաւատարիմ ծառայ Աստուծոյ», որին Գրիգոր Տաթևացին անհրաժեշտ է նկատել զգուշացնել ոչ միայն զանազան հերձվածողություններից, այլ նաև երկաբնակներից:

Մասուդշահի անունը, որոշ որակումների կրկնությամբ, հիշատակվում է նաև «Ոսկեփորիկ»-ի Ա գլխի վերջում. «որ և դու երևիս որդի լուսոյ և զաւակ տուընջեան հարազատ Վերնոյն Սիովնի և անդրանիկ ըստ հոգւոյ Մասուտշահ, որ ի խնդիր ելեր զանձին ծածկելոյ և պատուական մարգարիտն, և գտեր մի պատուական և գեղեցիկ զանխօս մարգարիտն, որոյ ոչ գոյ գին»[9]: Ասել է, թե՝ Մասուդշահը միաբնակ դավանության հետևորդ է, հայազգի իշխանական տան շառավիղ («սեպուհ» այս պարագայում պիտի հասկանալ «իշխան», «իշխանազուն», ինչպես նա կոչված է N 1476 ձեռագրի վերտառության մեջ, էջ 13ա)[10]:

Թավրիզաբնակ իշխանական այս ընտանիքին վերաբերող մի ուշագրավ տեղեկություն էլ աղբյուրներից քաղել է Ղ. Ալիշանը[11], ըստ որի՝ 1378-1383 թվականների միջև Տաթևի եպիսկոպոսներից Ստեփանոսը «ենգութեամբ կոչեցեալ»՝ իր եպիսկոպոս և աբեղա զարմիկների հետ գնում է կողմնակալ Սոֆի Խալիլի մոտ, որը Ստեփանոսի երկու հարազատներին դաժանորեն սպանել է տալիս, իսկ իրեն հինգ տարի բանտարկում: Ստեփանոս եպիսկոպոսի քույրը գնում է «ի Դաւրէժ առ մայր Եաղուպշահի», որը՝ դշխուհին, «առաքեաց առ Սոֆին պատուէր՝ արձակել զչարչարեալն»: Սրան ի պատասխան բռնավորը կոչ է անում՝ «զալ և բռնութեամբ կորզել ի նմանէ»: Ինչպես և կատարում են:

Նախ նկատի ունենանք, որ Ստեփանոս եպիսկոպոսը Ծմավոն եպիսկոպոսի որդին էր՝ «յազատ տանէ և ի մեծ ազգէ», որն ուներ «բազում ճորտս այլազգիս», ուրեմն ուներ իր զո-

---

[9] Ձեռ. 5118, էջ 5v - 6r:

[10] «Սեպուհ» նզրի մասին տե՛ս Н. Я. Марр, Этимология армянского "սեպուհ" и грузинского "სეფე" ЗВО, т. V, стр. 286.

[11] Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 241:

բաջոկատը, որով կարող էր հարձակում գործել և ազատել որդուն: Այստեղից դժվար չէ մակաբերել, թե հիշյալ Օմավոն եպիսկոպոսն ու նրա որդի Ստեփանոս եպիսկոպոսը, ինչպես նաև սպանված զարմիկները հոգևոր աստիճաններ առած ավատատերեր էին՝ պարոնտերեր: Ինչ վերաբերում է Թավրիզում բնակվող Ցաղուպշահի մայր դշխուհուն, որի պահանջը Սոֆի Խալիլը փորձում է մերժել և հարկադրում է ուժ գործադրելով ազատել Ստեփանոս եպիսկոպոսին, սա, անտարակույս, «Ոսկեփորիկ»-ի պատվիրատու Մասուդշահի ընտանիքի ավագն է, նրա հոր՝ Ցաղուպշահի կամ Ցակոբշահի մայրը, որին դիմել է Ստեփանոսի քույրը:

Ի թիվս այլ խնդիրների՝ այս հիշատակարանները մղում են մտածելու, թե հայոց ազնվականական որոշ ընտանիքներ Լանկ Թամուրի արշավանքների նախօրեին և անգամ նրա՝ Հարավային Հայաստանն ու Ատրպատականը գրավելուց հետո շարունակում էին պահպանել իրենց կալվածքները և նույնիսկ զորական որոշ ուժեր: Ավելին, ավատատիրական իրավունքի պատմության տեսակետից ուշագրավ փաստ է գերդաստանի տղամարդ ավագի բացակայության պարագայում կին ներկայացուցիչների իրավաժառանգության դրսևորման հնարավորությունը: Մեկ դեպքում ընտանիքի այր անդամները հոգևորական են ձեռնադրվել, ուստի Ստեփանոսի քույրն է ստանձնել միջնորդությունը, մյուս դեպքում, թերևս Ցաղուպ/Ցակոբի բացակայության կամ բավարար տարիք չունենալու պատճառով, ուժով ազատելու նախաձեռնողի դերում հանդես է գալիս մայրը՝ դշխուհին:

Պատմագիտական առումով կարևոր է ընդգծել, որ թեև ժամանակակից աղբյուրները միաբերան խոսում են Լանկ Թամուրի կատարած ավերածությունների ու սրածությունների մասին, այնուամենայնիվ նրա ու հաջորդների տիրապետության ժամանակ ևս հայկական իշխանական որոշ ընտանիքներ պահպանել էին իրենց տիրույթները, արտոնությունները ու ամրությունները: Այս առումով խիստ ուշագրավ է 1403-1406 թվականներին վերաբերող իսպանացի ճանապարհորդ Ռույ Գոնցալեց Դի Կլավիխոյի վկայությունը Մակու ամրոցի հայազգի իշխան Նուր-ադ-դինի ընտանիքի վերաբերյալ: Ամրոցի պաշարումից ձեռք քաշած Թամուրը իշխանի որդուն ընդգրկում է իր թոռ Օմար Միրզայի մերձավորների շարքը, մահմադականացնում՝ Սիուրղաթմիշ (կամ՝ Սոյուրդաթմիշ) անուն տալիս: Ճանապարհորդին հյուրընկալող իշխանը «մեծ մխիթարություն էր զգում այն իրողությունից, որ մենք քրիստոնյա էինք»[12]: Իշխանազունի իսլամությունը առերես է, իսկ նրա հայրը պատրաստվում էր իր մյուս որդուն, որը «ավելի հայ լեզվի քերականության ուսանող է և վարպետ...», ուղարկել Իսպանիա և Պապի կողմից նրան ձեռնադրել տալ «եպիսկոպոս իր հոր նահանգի վրա»: Ճանապարհորդն ինքն էլ զարմանում է, թե ինչպես են այս միջավայրում քրիստոնյա և «փաստապես հայ ազգին պատկանող» մնում[13]:

Ամրոցի տիրակալը, բնականաբար, զինական կարողություն ուներ իր տիրույթը պաշտպանելու, այլև նույն աղբյուրի վկայությամբ՝ քսան ձիավոր էլ տալիս է Թամուրի բանակներին միանալու: Խառնակ այս ժամանակներում, երբ Չոբանյանների ու Ջելաիրյանների պատերազմներին հաջորդեցին Թամուրյանների անողոքությունները, հայկական առանձին իշխանական տներից բացի, զինական ու դիվանագիտական հնարանքնե-

---

[12] **Հովհ. Հակոբյան**, Ուղեգրություններ, հատ. Ա, ԺԳ-ԺՁ դար (1253-1582), Երևան, 1932, էջ 115:

[13] Անդ, էջ 116:

ի գործադրումով, «բազում ճորտ այլազգիս» և մանավանդ սեփական ջոկատ ունենալու շնորհիվ իրենց տիրույթներն ու հավատացյալներին պաշտպանելու լուրջ փորձեր էին անում հոգևոր իշխանությունները: Տաթևի մետրոպոլիտն, օրինակ, ինչպես ասվեց վերևում, կարողանում էր տեր կանգնել իր տիրույթներին, իսկ Միջագետքում (նաև Ամիդում) գործող Մկրտիչ Նաղաշ եպիսկոպոսը, շինարարական ու վերականգնողական աշխատանքներից բացի, «բազում գերիս ազատեաց յանօրինաց՝ զորս գնելով, և զորս խնդրեաց ի պարոնաց, և զորս յափշտակելով ի ճանապարհին: Առաքէր ի ծառայոց իւրոց արս զորեղս և արտապինդս, և խլէին զգերիս յանաւրինաց և բերէին ի նորաշէն վանս իւր ապաստանի...»[14]

Վերևում կատարված քննությունը մեզ հիմք է տալիս ամփոփելու, որ

1. Գրիգոր Տաթևացին մեզանում հիրավի միջնադարյան գիտության խոշորագույն ներկայացուցիչներից մեկն է, որը փորձում է իր կազմած ժողովածուներով ամփոփել գիտելիքների այն համակարգը, ինչ ձեռք էին բերել վանական ուսումնագիտական կենտրոնները, այսօրվա պայմանական տերմինաբանությամբ՝ համալսարանները: «Ոսկեփորիկ»-ը փաստորեն հայոց դավանական գիտելիքների առձեռն հանրագիտարան է, որի հիմքը Գրիգոր Տաթևացու այն համոզումն է, թե «բնական քննութեանն հետևի հերձուած, իսկ հաւատոյն՝ ուղղափառութիւն»: Թովմա Մեծոփեցու գնահատությամբ՝ «եւ էր սա (իմա՛ Գրիգոր Տաթևացին – Պ.Մ.) առատ և ճոխ բանիւ՝ ոչ գոլով նման նմա յազգս ամենայն, ոչ ի հինն և ոչ ի նորս, երկրորդ Աստուածաբան և Ցոհան Ոսկեբերան...»[15]:
2. Հայկական իշխանական տների շառավիղները այս ու այնտեղ հարմարվում էին մոնղոլների, ապա և Թամուրյանների և նրանց հաջորդների օրոք երկրում ստեղծված կացությանը՝ մերթ փոխելով իրենց տոհմիկ զբաղմունքը և «խոջա» հորջորջվելով, մերթ յուրացնելով օտար իշխեցողներին ընտանի անուն – տոհմանուններ, երբեմն նույնիսկ առերես կրոնափոխ լինելով, բայց պահպանելով իրենց տիրույթները, հաճախ նաև զինված ջոկատներով իրենց ինքնակայությունը ապահովելով:
3. Պահպանված իշխանական ընտանիքների պայազատները կապ էին պահում ազգային-մշակութային օջախների և ժամանակի երևելի հոգևոր գործիչների հետ, որոնց համար քաղաքական-դավանական հովանավորություն էին ապահովում՝ նույնիսկ զինական միջամտության գործադրումով: Ավելին, այդ պայազատները կարող էին հովանավորել մշակութային նշանակալի նախաձեռնություններ, որպիսին Գրիգոր Տաթևացու 1401 թ. գրած «Ոսկեփորիկ»-ի երևան գալն է:

Հավելված

Գրիգոր Տաթևացու «Ոսկեփորիկ»-ի անդրանիկ՝ 1746 թ. հրատարակությունը, ինչպես նշվեց վերևում, ուղեկցվում է Հակոբ Պատրիարք Նալյանի հանձնարարական

---

[14] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 626:

[15] **Թովմա Մեծոփեցի,** Պատմություն, աշխատասիրությամբ Լևոն Խաչիկյանի, Երևան, 1999, էջ 47:

առաջաբանով, որ գրված է «ի խնդրոյ մահտեսի Ղափանցի Շահնազարին»: Հարկավ, այս մահտեսին Տաթևացու «Գիրք հարցողաց»-ի 1730 թ. տպագրության մեկենասներից մեկն է, նույնական «Արևելից մահտեսի Շահնազարի» անձնավորությանը, որ Հովհաննես Կոլոտ Պատրիարքի հրամանին ականջալուր գրասեր էր: Հակոբ Նալյանի «Առաջաբանություն»-ը գտնում ենք նաև տպագրից կատարած ընդօրինակմամբ, որ նրա ճանաչողական արժեքի վկայություն է: Հենց այս պարագան մեզ թելադրեց այն վերստին հրատարակել՝ քաղելով Մատենադարանի N 1454 ձեռագրից:

ԳԻՐՔ ՈՐ ԿՈՉԻ ՈՍԿԵՓՈՐԻԿ, ԱՐԱՐԵԱԼ ՍՐԲՈՅՆ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՒԱՑՒՈՅՆ՝ ԵՕԹՆԱԼՈՅՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Առաջաբանութիւն սրբոյ մատենիս: Նախերգանօրէն յայտարարութիւն առ ընթերցողսն, արարեալ տեառն Յակոբայ աստուածաբան վարդապետի և պատրիարգի Կոստանդնուպոլսոյ ի խնդրոյ մահտեսի Ղափանցի Շահնազարին:

Գերապատիւ և հոգեղի ճշմարտաբան և եղիական նախանձու աստուածապետականին պաշտօնէիւ վառեալ մեծ վարդապետն Հայաստանեայց երանելին Գրիգոր Տաթևացի՝ անդուլ վաստակաւորն, քրտնաջան մշակն, արդիւնարար աստուածպաշտութեան շահավաճառն, երկնային ախոյանն և ծաղկահաւաք մեղրաշէնն, գոլով ճրագ յաշտանակի եդեալ, ոչ կամելով զքանքար բանին յերկրի ծուլութեամբ թագուցանել, փոյթ յանձին կալեալ զփոքրատես և զյաճախաբան գրքուկս ընծայել Հայաստանեայցս իւրական ազգի, ջանաց որքան և կարաց հաւաքումն առնել յԱստուածաշունչ գրոց՝ Հնոց և Նորոց կտակարանաց և աստուածաբանից վարդապետաց, որպեսզի զկնի ինքեան իբրու փողով իմն ազդարար լինիցէր ազգիս Հայոց ի ձեռն գրքոյս այսորիկ, ազդելով զգալուստ մորթազգեցիկ գայլոց, փոքունց ապականարար աղուիսուց և որոմնացանից թշնամեաց ի մէջ ցորենական սերմանեաց սրբազանից գրուածոց: Ցաւել և զայն իբր զառձեռն պատրաստական զէնս ընդդէմ գողիադասարաս ամբարտակաց և ոչ առանց արդեանց կոչեաց զանուն սորա Ոսկեփորիկ: Քանզի արդարև սոյն այս գրքուկ ունի յինքեան իբր ի փորի իւրում զէլիլատական ազնիւ ոսկիս՝ բուսուցեալ խոնաւութեամբ աստուածայնոց շնորհաց և եփեալ հրով աստուածային սիրոյն: Սոյն այս գրքուկ իբր զտապանակն կտակարանաց պատեալ ներքոյ և արտաքոյ ոսկւով սրբով, ունի ներ ինքեան զծաղկեալ գաւազանն Ահարոնի՝ ժողովիչ ոչխարաց և փախուցիչ գայլոց: Ունի և զքարեայ տախտակն աստուածայնոց օրինաց՝ ուսուցիչ սիրոյն Աստուծոյ և ընկերին: Ունի և զբուրվառն ոսկի, հրով տափման և անուշահոտ կնդրկաց իմաստիւք աղլցեալ: Ունի և զսափորն ոսկի՝ լի մանանայիւ երկնաւոր շնորհաց ընդունարան: Իսկ կցեալն առ սմին շնորհալի վարդապետութիւնք սրբոյն Գրիգորի Վկայասիրի, նախապէս Վահրամ կոչեցելոյ, յիրաւի չքնաղ և զարմանալի, սակաւաբան և բազմաբան ի խորհուրդ Սրբոյ Երրորդութեանն և ի վերայ մարդեղութեանն Քրիստոսի խօսեցեալ և արքունական պողոտայիւ արտադրեալ, զոր ոչ պակաս պատուով յարգելի վարկանիմ, քան զբանս սրբոյն Դիոնիսիոսի Արիսպագացւոյ և քան զբանս Գանձունց և Պարապմանցն Կիւրղի Աղէքսանդրացւոյ, և քան զԱռ որսն Գրիգորի Աստուածա-

բանին, որոյ արդիւնաւորութիւնքն մանաւանդ վերծանութեամբ և ընթերցմամբ, քան թէ զբօսնլովք ծանուցանին: Վասն որոյ յորդորեմք զաստուածասիրութիւն ազինդ մերոյ ստանալ զսոյնս ի միում տփի իբր զերկփեղկեան տախտակս Կտակարանացն և իբր զերկու լծակս Տապանակին, որովք բարձեալ լինի Քրիստոս որդին Աստուծոյ՝ ոսկիաձոյլ բնութեամբն Աստուած հանդերձ անփտելի փայտիւն անապական մարդեղութեանն: Որոց յանձն առնեմք զայսոսիկ երկփեղկեան գրեանքս համայնից պասքելոց իբրև զօշարակս աստուածայինս, որովք արբեալք ի տկարութեանց ապաքինեսցին և փառս Աստուծոյ՝ պարգևօղին շնորհաց մատուսցուք, ողջ կալով ի տէր Յիսուս առ յոյսն բնաւից, ամէն:

Ուսումնասէր եղբարցդ իմոց լիցի յայտ յաղագս յառաջաբանութեանս, զի գրեցաք թէպէտ՝ ի ձեռագիր Ոսկեփորիկսն ոչ գոյ գրեալ զայս, սակայն որովհետև ի բասմա գրքէ օրինակեցի զթերին ածելով ի վերայ առաջնոյ ձեռագրով գրեցելոյն ոչ ձանձրացայ այսպիսի գեղեցկազան գովեստիւ լցեալ բանս արտաթողուլ, այլ ի պատիւ յարմարողի սորին ներ ածի աստ:

Ձեռ. N 1454, էջ 8ա - 9ա